ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ՇՏԱՊԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

МЕРИЯ ЕРЕВАНА
«СКОРАЯ МЕДИЦИНСКАЯ ПОМОЩЬ»
ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

№ 705

«03» 04 2026 թ.

ք. Երևան, Հնդկաստանի փող. 8 շինություն
Հեռ. + 374 10-51-03-00
էլ.հասցե: shtap.ognutyun@yerevan.am

«ՍՓԼԱՅՐ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ՝ ՏԻԳՐԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ
ՀՎՀՀ՝ 01366848
էլ.հասցե՝ supplietllc0@gmail.com

Հարգելի՛ պարոն Գասպարյան,

26.03.2026 թվականին Ձեզ, որպես ընտրված մասնակցի, ուղարկվել է ծանուցում այն մասին, որ № «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-26/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի №№ 1, 5, 6, 7 և 8 չափաբաժիններով հաղթող է ճանաչվել «ՍՓԼԱՅՐ» ՍՊԸ-ն:

Միաժամանակ Ձեզ է ներկայացվել «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ի կարիքների համար «Անվադողերի և մարտկոցների» ձեռքբերման № «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-26/10-1» ծածկագրով գնման պայմանագրի նախագիծը, որը ենթակա էր կնքման՝ հրավերով սահմանված կարգով որակավորման ապահովումը (հավելված 4.2) և պայմանագրի ապահովումը (հավելված 5.1) ներկայացնելուց հետո:

Հրավերի 10.1-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակիցը պարտավոր էր ծանուցումն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները, հակառակ դեպքում պայմանագիր չի կնքվում:

Սակայն «ՍՓԼԱՅՐ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջվող ապահովումները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. № 526-Ն որոշման 1-ին հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ նշված հանգամանքը համարվում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Բացի այդ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝
ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը,
բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում ենք, որ «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն 03.04.2026թ. դրությամբ № «ՇԲՕ-ԳՀԱՊՁԲ-26/10-1» ծածկագրով գնման պայմանագրի նախագիծը համարում է ուժը կորցրած (առոչինչ), և տվյալ մասնակցի հետ պայմանագիր չի կնքվելու:

ՏՆՕՐԵՆ՝ **Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**